Զվարարության փող

Trumpet's Sound

48-ՐԴ ՏԱՐԻ, ԱՎԱՍՏՐԱԼԻԱ
ՄԱՐՏ - ԱՊՐԻԼ 2017

Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHED BY THE
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren.org
URL: www.acmaust.org

«ԱԶԴԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ» երկամսյա թերթը Սիդնեյի Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակությունն է: Պատասխանատու խմբագիր՝ հովիվ Հրաչ Գույումճյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Յանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հարություն ..... Հովիվ՝ Հրաչ Գույումճյան

Ճամփորդելու ուրախությունը ..... Ռեքս Տիրլավ

Արդյոք բջջային հեռախոսդ լիովին լիցքավորվա՞ծ է ..... Վեր. Ռաֆֆի Զափարյան

Ինչպես որ եմ ..... Քաղվածք

Աստծո բոլոր մեծ ծառաները ծնվել են կանանցից. ..... Վարդան Սարգիսյան

Փոխված կյանքեր ..... Աստվածատուր Ղազարյան

Եբրայեցիներին ուղղված նամակը (բաժին 2, մաս 1) ..... QMBC պանորամա

Մի՛ վհատիր, անգամ երբ մարդիկ չեն անում ..... Դոկտ. Զեսլո Բասսարա

Հոգևոր տնտեսագիտության դասեր (2) ..... Մանկանց ավետ. ընկ.

Ի՞նչը մղեց Հիսուսին խաչը բարձրանալու ..... Հովիվ՝ Հապիպ Ալաճաճի

Մարիամ, որդի ունենալու խոստում ..... Դոն Սթորմըր

Քեզ ի՞նչ օգուտ ..... Գառնիկ Աբրեյան

Հարություն

«Քանի որ Դու իմ անձը դժոխքի մեջ չես թողնի և Քո Սրբին ապականություն տեսնել չես տա» (Սաղմոս 16.10):

Վերոնշված համարում գործածված «դժոխք» բառը եբրայերեն բնագրում «շեոլ» բառն է, որը նշանակում է խավար, անստուգություն, վայր, որտեղ գտնվում են բոլոր մահացածները անկախ այն բանից, թե իրենց կյանքի ընթացքում բարոյական ինչպիսի ընտրություններ են կատարել: Այսինքն այնտեղ են թե՛ արդարները, թե՛ ամբարիշտները: Այն խավարի ու լռության վայր է, որտեղ չկա կյանքի որևէ նշույլ:

Սակայն Տեր Հիսուսի և Նրա առաքյալների ուսուցումների շնորհիվ ավելի հստակ պատկեր ստացանք այն մասին, թե ինչ է պատահում մեզ հետ մահից հետո: Մենք գիտենք, որ շատ մարդիկ սարսափում են մահից և չեն ուզում դրա մասին խոսել կամ նույնիսկ մտածել, այնուամենայնիվ, մահը իրականություն է, որին մի օր հանդիպելու են բոլորը՝ կամա թե ակամա: Սակայն հավատացյալները ինչպիսի՞ հաղթություն ունեն Քրիստոսով: Դավիթ թագավորը մեծ հույսով ու հավատքով կարողացավ ասել. «Քանի որ Դու իմ անձը դժոխքի մեջ չես թողնի և Քո Սրբին ապականություն տեսնել չես տա»:

Ամեն տարի Հարության տոնը նշելու համար մեր երկրում չորս օրվա արձակուրդ է տրամադրվում: Մարդիկ ծովեզերք են գնում, ընտանեկան խնջույք կազմակերպում, կրիքեթ խաղում կամ ձկնորսությամբ զբաղվում: Երեխաներին շոկոլադե նապաստակներ և գունավոր հավկիթներ են տալիս, կանայք ավանդական ճաշատեսակներ և հրուշակեղեն են պատրաստում… Սակայն այս բոլորը մեզ չեն պատմում, թե ինչո՞ւ Հիսուսն աշխարհ եկավ: Նա եկավ, որպեսզի ես և դու կարողանանք փրկվել ու հավիտենական կյանք ունենալ: Հիսուսին հավատալով հավիտենական կյանքն ենք ժառանգում. սա գործերով չէ, այլ միայն հավատքով:

Հաճախ Տեր Հիսուսը խոսեց երրորդ օրը հարություն առնելու մասին: Հարությունը ցույց է տալիս Քրիստոսի հաղթանակը մահվան

նկատմամբ: Այս հաղթանակը քոնը կարող է լինել այսօր, եթե հավատաս:

Հիսուսն ասել է. «Իմ Հոր տանը շատ բնակարաններ կան. եթե այդպես չլիներ, Ես ձեզ կասեի: Ես գնում եմ ձեզ համար տեղ պատրաստելու» (Հովհ. 14.2):

Եթե տարվա մեջ տոն կա, որ մեծ շուքով և ուրախությունով պետք է նշել, ապա անկասկած դա Հարության տոնն է: Դու ուրախությամբ կարող ես վստահ լինել, որ Հին Կտակարանի «շեղ»-ի անստուգությունը հավատացյալների համար չէ, նրանց համար չէ, ովքեր ապաշխարում են, վստահում Տեր Հիսուսին ու իրենց հանդերձները մաքուր պահում:

Մինչ պատրաստվում ենք Հիսուս Քրիստոսի հարությունը տոնելուն, եկե՛ք հիշենք, որ մենք՝ հավատացողներս, վերափոխվելու ենք և նոր մարմիններ ենք ստանալու, որոնք այս ապականացու աշխարհից չեն: Հարության ժամանակ Քրիստոսով նոր մարմիններ ենք ստանալու, որպեսզի Իր հետ և Իր համար հավիտյան ապրենք Երկրնքում:

Այս տարի Հարության տոնը ինչպե՞ս ես տոնելու, շոկոլադե նապաստակո՞վ, թե՞ Քրիստոսի բերած հաղթությամբ: «Ո՛վ մահ, ո՞ւր է քո խայթոցը, ո՛վ գերեզման, ո՞ւր է քո հաղթանակը»:

Օրհնյալ Զատիկ բոլորիս

Հ. Գ.

Ճամփորդելու ուրախությունը

Ամեն կյանքում երբեմն հանդիպում ենք մարդկանց, ովքեր մեզ համար կոթողներ են հանդիսանում: Թույլ տվեք ձեզ պատմել մի տարեց տիկնոջ մասին, որին ճանաչում էի: Նա տկար, անկողնուն գամված մի անձնավորություն էր և այնքա՜ն նիհար, որ հազվադեպ էր իր անկողնու ծրարի մեջ ծածկոց դնում: Որպես պատանի հաճախ

այցելում էի նրան՝ հուսալով, որ թերևս իմ այցելությամբ ինչ-որ ձեվով կքաջալերվի: Հիմա, ետ նայելով, չեմ պատկերացնում, թե ինչ էր մտածում իմ կատարած հովվական այցելությունների մասին, բայց ամեն անգամ երբ հեռանում էի իր մոտից, այնպիսի զգացումով էի լցվում, որ կարծես թե ավելի շատ ստացել եմ, քան տվել: Մինչ մտածում եմ նրա մասին, գիտակցում եմ, որ չնայած տարիքին ու տկարությանը՝ նա ներքին ուժ ուներ, որը վարակիչ էր: Նա Աստծո հետ այնքա՜ն մտերիմ էր. իսկապես նախանձում եմ մինչև օրս: Չնայած տարիքով մեծ լինելուն՝ նա տակավին սովորում էր: Նա կանգնած էր հավիտենականության եզրին, պատրաստ Աստծո հետ հաջորդ արկածային ճամփորդությունը կատարելու համար:

Հանդիպել եմ նաև շատ այլ տարեց քրիստոնյաների և ինքս ինձ հարց եմ տվել, թե ի՞նչ կար այս մարդկանց մեջ, որ այդքան գրավիչ էր: Հրապուրիչ լինելու պատճառներից մեկը այն էր, որ նրանց հոգեվոր կյանքը միշտ շարժման մեջ էր: Նրանք լճակի մեջ թակարդն ընկած ջրերի պես չէին, որոնք անշարժ են, հապա հոսող գետերի նման էին, որոնք, առաջ շարժվելով, կյանք և եռանդ էին տարածում: Նրանք անսահման Աստծո հետ ճամփորդելու իրենց հետաքքրասիրությունը չեն կորցրել: Աստված Իր մասին նոր բացահայտումներ էր տալիս նրանց, ինչի արդյունքում նրանց կյանքն անընդհատ փոխվում էր: Նրանք հիշեցնում են Պողոսի հետևյալ խոսքերը. «Ոչ թե արդեն հասել եմ, ոչ էլ արդեն կատարյալ եմ, այլ հետամուտ եմ, որ ձեռք բերեմ այն, ինչի համար Քրիստոս Հիսուսի կողմից ներգրավվեցի» (Փիլիպ. 3.12): Մեկ խոսքով, նրանք առաջ վազողներ են, ճամփորդներ: Նրանք այնպիսի ճամփորդներ չեն, որ ճշմարտությունն են փնտրում, այլ ինչպես Պողոսն է ասում՝ ներգրավված են Քրիստոս Հիսուսի կողմից: Նրանք այն գիտակցությունը ունեն, որ Հիսուս Քրիստոսը գտել է իրենց, և այս ճշմարտությամբ այնքա՜ն են ոգեշնչվել ու գրավվել, որ իրենց կյանքերը փոխվել են, և սկսել են Քրիստոսին ավելի մոտիկից ճանաչել:

Աբրահամ նահապետի կյանքի խորհրդանիշը վրանն էր: Օտար երկրում նա պանդուխտի պես վրաններում բնակվեց (Եբր. 11.9): Նա պանդուխտ էր, ով մշտապես ճամփորդության մեջ էր և փորձառաբար ճանաչում էր Աստծուն: Սակայն բոլորովին այլ պատկեր է Աբ-

ռահամի եղբորորդին՝ Ղովտը. ակնհայտ է, որ նա չէր սիրում պանդուխտի կյանքը (Ծննդոց 13):

Այսօրվա շատ մարդկանց պես նա ապահով կյանք էր փնտրում, որը բաղձալի վայր հասնելու գիտակցությունից էր գալիս: Ուստի նա ընտրեց Սոդոմում հաստատվելը: Նա չսիրեց վրանային կյանքը. քաղաքն իր համար ավելի ապահով էր: Բայց նրա ապահովության զգացումը խաբուսիկ էր, իր հասած վայրը՝ կեղծ: Նա պարզապես դադարեց առաջ ընթանալուց: Եթե կարդաք Ծնն. 19-րդ գլուխը, կտեսնեք, որ վերջում Աբրահամը շատ ավելի ապահով էր իր պանդուխտի վրանում, քան Ղովտը Սոդոմ քաղաքում:

Այն քրիստոնյաները, ովքեր զգում են, թե տեղ են հասել, քիչ փափագ ունեն Պողոսի և Աբրահամի նման ճամփորդությունը շարունակելու և Աստծուն փորձառաբար վայելելու, արդյունքում՝ իրենց անձնական կյանքերում փոփոխություններ տեսնելու, վտանգի առջև են կանգնած. իրենց հասած տեղը կեղծ է: Ուշ թե շուտ Ղովտի պես հայտնաբերելու են, որ իրենց հասած վայրը խաբուսիկ է: Ի վերջո այն իրենց համար ձանձրույթի և հոգևոր լճացման վայր է հանդիսանալու, որտեղից հարկավոր է փախչել: Նրանց տեսանկյունը և աստվածճանաչությունը հիմնված է ոչ առողջ մոտեցումների վրա. դա խանգարելու է Հիսուս Քրիստոսին ավելի նմանվելուն: Մի խոսքով, նրանք կդադարեն Քրիստոսի աշակերտներ կամ սովորողներ լինելուց:

Այդ տարեց տիկինը չէր դադարել ճամփորդելուց: Իր տարիքում նա վազում էր Պողոսի նման ու ճամփորդում Աբրահամի նման: Մինչ նա շարունակում էր ջանասիրաբար ճանաչել Աստծուն, առանց տեղյակ լինելու նա Աստծո հանդեպ իմ ախորժակն ավելի էր բացում:

Մի պահ տրամադրեք՝ Աստծուն ասելու, որ ուզում եք ձեր հոգևոր կյանքում առաջ ընթանալ և որ իսկապես ուզում եք դա իրողություն դառնա ձեր կյանքում:

Ռեքս Տիրլավ

❊ ❊ ❊

Արդյոք բջջային հեռախոսդ լիովին լիցքավորվա՞ծ է

Արդյոք բջջային հեռախոսդ լիովին լիցքավորվա՞ծ է: Արդյոք անհարմարություն չե՞ս զգում, երբ բջջային հեռախոսիդ մարտկոցը ուր որ է սպառվելու է կամ արդեն սպառվել է և մոտակայքում էլեկտրականության աղբյուր չկա: Հաճախ այսպես է պատահում մեզ հետ ճիշտ այն պահին, երբ շատ կարևոր հեռախոսազանգի ենք սպասում կամ էլեկտրոնային փոստն ենք ստուգում:

Ես ինձ ապահով եմ զգում, երբ տանն եմ կամ գրասենյակում՝ իմանալով, որ հեռախոսս միացված է էլեկտրական սնուցիչին, մինչ օգտագործում եմ այն: Ես երբեք մտահոգվելու կարիք չունեմ, քանի որ գիտեմ, որ այն միացված է էլեկտրական սնուցիչին: Այն էլեկտրականության անսպառ աղբյուրին է միացված, և կապ չունի, թե որքան եմ գործածելու. այն միշտ լիցքավորվելու ընթացքի մեջ է: Խնդիր կծագի, երբ հեռանամ այդ աղբյուրից…

Իհարկե, այսօր կան այնպիսի միջոցներ, ինչպիսիք են մարտկոցների շարժական սնուցիչները, որոնք կարող են էլեկտրականությամբ ապահովել մեր բջջայինները: Սա շատ լավ է. ես այլևս մտահոգվելու կարիք չունեմ, քանի որ ունեմ աղբյուր, որին կարող եմ դիմել, երբ հեռախոսիս մարտկոցը դատարկվի:

Նույնը պատահում է մեզ հետ հոգևոր ոլորտում: Եթե ես և դու ուզում ենք հոգևորապես ուժեղ լինել, հաղթական կյանքով ապրել, Աստծո զորությունը միշտ մեզ հետ ունենալ, երբեք չսպառվել զորության պակասության պատճառով և Աստծո առաջնորդությունը միշտ ունենալ մեր կյանքում, ապա պետք է միշտ միացած լինենք Հիսուսին: Նա Աստծո անսպառ զորության աղբյուրն է: Աղոթելով և Աստվածաշունչը կարդալով մենք կարող ենք ունենալ այդ զորությունը, հաղթանակն ու առաջնորդությունը, որն Աստծուց է գալիս: Հիշի՛ր, որ պետք է միշտ միացած լինես Հիսուսին: (Ղուկ. 11.28, Եփես. 6.18, Ա Տիմ. 2.1-4, Բ Տիմ. 3.16-17):

Ռաֆֆի Չափարյան

Ինչպես որ եմ

Շատ տարիներ առաջ Լոնդոնում երեկոյան ընկերային մեծ հավաքույթ կար, որին հրավիրված էին մայրաքաղաքի երևելիները: Ներկա էր նաև նշանավոր մի քարոզիչ՝ Սեզար Միլան անունով: Ճառեր խոսեցին, երաժշտություն հնչեց, և ուրիշ բազմաթիվ հետաքրքիր բաներով ներկաները հյուրասիրվեցին: Բաժին վերցնողների մեջ ուշադրության արժանի էր մի երիտասարդ օրիորդ, ով դաշնամուր նվագեց ու միևնույն ժամանակ երգեց: Իր գեղեցկությունը, նվագելն ու ձայնն նրա անձը խոսակցության նյութ դարձրին: Վերոհիշյալ քարոզիչը՝ շնորհքով, ամենայն խոհեմությամբ և քաղաքավարությամբ մոտեցավ այդ օրիորդին, շնորհավորեց, գնահատեց նրա նվագելը, ձայնը և ասաց.

- Մինչ Ձեզ լսում էի, մտածեցի, որ Տեր Հիսուսի դատը զգալիորեն պետք է օգտվեր, եթե Ձեր շնորհները Նրան նվիրված լինեին: Ձեմ ուզում Ձեզ վիրավորել, օրիո՛րդ, սակայն պարտքս եմ համարում ասել, որ Աստծո առջև մեղավոր ես այնքանով, որքան անպատիվ կինը: Սակայն ուրախ եմ քեզ հայտնելու, որ Աստծո Որդու՝ Տեր Հիսուս Քրիստոսի արյունը քեզ մաքրում է բոլոր մեղքերից:

Ուշադրությամբ լսելուց հետո օրիորդը հանդիմանեց քարոզչին իր ամբարտավանության և իրեն վարկաբեկելու համար: Քարոզիչը պատասխանեց.

- Օրիո՛րդ, նպատակս Ձեզ վիրավորելը չէ: Կաղոթեմ, որ Աստծո հոգին Ձեզ համոզի:

Հավաքույթը վերջացավ, ու բոլորն իրենց տուն գնացին: Վերոհիշյալ օրիորդն անկողին մտավ և հակառակ այն բանի, որ շատ հոգնած էր, չկարողացավ քնել: Երբ աչքերը փակում էր քարոզչին էր տեսնում ու նրա ասած խոսքերն էր լսում: Սուրբ Հոգին սկսեց զորավոր ձևով գործել նրա սրտի մեջ, ցույց տվեց նրա մեղավոր ու Աստծո ողորմության կարոտ լինելը: Վերջապես գիշերվա ժամը երկուսին վեր կացավ, նստեց գրասեղանի առջև, ու մինչ արցունքները այտե-

րից ցած էր գլորվում, Շարլոթ Էլյոթը գրեց հետևյալ նշանավոր տողերը.

Ինչպես որ եմ՝ մեղքով լցված,
Խե՜ղճ, մեղավոր ու կորսված,
Աչքերս դեպի Փրկիչդ ուղղած՝
Գա՛ռն Աստծո՝ Քեզի կու գամ:

Ինչպես որ եմ՝ շատ տանջված,
Ու բազմաթիվ մեղքով պատած,
Ասդին, անդին մի՛շտ տատավնած,
Գա՛ռն Աստծո, Քեզի կու գամ (Էլմ. 374):

Սա Էլմաճյան երգարանի մեջ 374-րդ երգն է: Մնացած քառատողերը կարող եք այնտեղից կարդալ: Ինչպես քարոզիչն օրիորդին ասել էր, այս երգն ավետարանչական ժողովների մեջ է օգտագործվում, ու հազարավոր մարդիկ Հիսուսին են գալիս, երբ Սուրբ Հոգու ներգործությամբ նրա բառերի ճշմարտությունը նրանց համոզում է, որ ապաշխարեն և Հիսուսին հանձնվեն:

Քաղված՝ «Օրհնաբեր նռնենին» գրքից

Աստծո բոլոր մեծ ծառաները ծնվել են կանանցից

Գեղեցիկ և իմաստուն կինը՝ ԱԲԻԳԻԱՆ (Ա Թագ. 25.1-44).

Աբիգիայի նման խոհեմ լինելով՝ քո տունը ապահովության և խաղաղության մեջ պահի՛ր:

Տեր Հիսուսին հետևող կինը՝ ՀՈՎՀԱՆՆԱՆ (Ղուկ. 8.1-3, 23.55, 24.10).

Հովհաննայի նման հետևի՛ր Տիրոջը ու միշտ Նրա ծառայության մեջ եղի՛ր:

Բարի գործերով ու ողորմություններով հայտնի կինը՝ ՏԱԲԻԹԱՆ (Գործք 9.36-43).

Տաբիթայի նման բարի համբա՛վ ունեցիր ու շատերի կարիքներին կարեկի՛ց եղիր:

Տիրոջ ծառայության մեջ առաջատար կինը՝ ՊՐԻՍԿԻԼԱՆ (Գործք 18.2, 18, 26, Հռոմ. 16.3, Ա Կորնթ. 16.19, Բ Տիմ. 4.19).

Կանայք իրենց ամուսինների կողքին կարող են ծառայել Տիրոջը: Պրիսկիղայի նման գործունյա՛ եղիր Տիրոջ թագավորությունը տարածելու մեջ:

Առաջին եվրոպացի քրիստոնյա աստվածավախ կինը՝ ԼԻԴԻԱՆ (Գործք 16.12-15, 40, Փիլիպ. 1.1-10).

Աստված Լիդիայի սիրտը բացեց, իսկ Լիդիան իր տունը բացեց Աստծո համար: Քո ունեցվածքով ու կարողությունով ծառայի՛ր Տիրոջն ու Նրա ծառաներին:

Տիմոթեոսի տատը՝ ԼԱՎՈԴԻԱՆ (Բ Տիմ. 1.5).

Չնայած որ Աստվածաշունչը խոսել է շատ տատիկների մասին, միայն Լավոդիայի անվանն է կցվել «Տատ» տիտղոսը:

Որպես մայր և տատիկ՝ քո սերնդին հարատևորեն ու հավատարմորեն սովորեցրո՛ւ Աստծո Խոսքի ճշմարտությունները:

Բոլոր կանանցից օրհնյալ կինը՝ ՄԱՐԻԱՄԸ (Մատթ. 1, 2, 12.46, Ղուկ. 1, 2, Հովհ. 2.1-11, 19.25, Գործք 1.14).

Աստված յուրաքանչյուր կնոջ կյանքում ծրագիր ունի: Մարիամի նման հնազա՛նդ եղիր Աստծո ծրագրին քո կյանքում:

Կենքրայի եկեղեցու սպասավոր քույրը՝ ՓԻԲԵՆ (Հռոմ. 16.1-2).

Փիբեի նման օգնության ձե՛ռք մեկնիր շատերին, բայց որպեսզի կարողանաս շատերին հասնել, պետք է նախ սկսես մեկով: Աղոթքով խնդրի՛ր, որ Տերը քեզ ցույց տա այն հավատակցին, ով քո կարեկցանքի կարիքն ունի:

Աղոթքի մեջ հարատևող կինը՝ ԱՆՆԱՆ (Ա Թագ. 1, 2).

Աստված ուրախանում է մեր աղոթքներին պատասխանելով: Աննայի նման՝ Տիրոջ Խոսքին հուսալով՝ հարատևի՛ր աղոթքիդ մեջ:

Հավատքի հոր՝ Աբրահամի կինը՝ ՍԱՌԱՆ (Ա Պետ. 3.1-6).

Ամենագեղեցիկ զարդարանքը, որն անգնահատելի ու գովելի է, կնոջ հնազանդությունն է իր ամուսնուն: Սառայի նման՝ Տիրոջով հնազա՛նդ եղիր քո ամուսնուն:

Բարակին քաջալերող մարգարեն՝ ԴԵԲՈՐԱՆ (Դատ. 4, 5).

Դեբորան, Աստծուց խոսք ստացած, գնաց Բարակին քաջալերելու, որ նա համարձակությամբ Տիրոջ գործն անի: Լցվի՛ր Աստծո Խոսքով, որպեսզի կարողանաս քաջալերել եղբայրներին՝ Ավետարանի լուրը ավելի համարձակությամբ աշխարհ հասցնելու ու թշնամուց գերեվարվածներին ու չարչարվածներին ազատելու համար: Եղի՛ր Դեբորայի նման՝ Աստծո Խոսքով քաջալերող:

Տեր Հիսուսին իր ունեցվածքով ծառայող կինը՝ ՇՈՒՇԱՆԸ (Ղուկ. 8.3).

Շուշանի նման ուրախ և հոժար սրտով ծառայի՛ր Տիրոջը քո ունեցվածքով՝ քանի որ Տերը սիրում է հոժարությամբ տվողին:

Իր տունը աղոթքի տուն դարձրած Հովհաննես Մարկոսի մայրը՝ ՄԱՐԻԱՄԸ (Գործք 12.12).

Մարիամի նման տունդ տրամադրի՛ր աղոթքի համար: Ուր երկու կամ երեք հոգի հավաքված լինեն Տիրոջ անունով, Նա այնտեղ է լինելու՝ լսելու ու պատասխանելու նրանց միաբանված աղոթքին (Մատթ. 18.19-20):

Բարի բաժինն ընտրող կինը՝ ՄԱՐԻԱՄԸ (Ղուկ. 10.38-42).

Ամեն օր նստի՛ր Քրիստոսի ոտքերի մոտ ու լսի՛ր Նրա անուշ խոսքերը: Եղի՛ր Մարիամի նման բարի բաժինն ընտրող, որը չպիտի վերցվի քեզանից:

Վարդան Սարգիսյան

Փոխված կյանքեր

«Ես սկզբում հաճախում էի եկեղեցի, սակայն չէի հասկանում հավաքվելու իմաստը: Երբ լսեցի պապիկիս վկայությունն այն մասին, թե ինչպես է Աստված իրեն բժշկել, ներսումս հավատ առաջացավ առ Աստված: Ես մինչև տասներկու տարեկան առողջական խնդիր ունեի: Բժիշկները խորհուրդ էին տվել ծնողներիս կա՛մ այրել հիվանդ օրգանը, կա՛մ հեռացնել այն: Բացի դրանից՝ ունեի քթի մազանոթի պատռվածք, և շարունակ արյունահոսություն էր լինում: Մի գեղեցիկ օր տատիկիս և հորաքրոջս հետ, ովքեր հավատում են Աստծուն, գնացի եկեղեցի: Խնդրեցինք հովվին, որ աղոթի ինձ համար: Աղոթքից հետո Աստված բժշկեց ինձ: Սկզբում բժշկեց իմ հիվանդ օրգանը, որոշ ժամանակ անց դադարեց նաև արյունահոսությունը: Բժշկությունիցս հետո հավատս մեծացավ: Մինչև տասնչորս տարեկան դառնալս չէի հաճախում եկեղեցի, բայց Աստծո ողորմությամբ հասկացա, թե Տերն ինչ է արել ինձ համար, և սկսեցի հաճախել: Աստված աղոթքներ լսող Աստված է», - ավարտեց Աստվածատուրն իր վկայությունն այս խոսքերով:

Այժմ Աստվածատուրը եկեղեցու ակտիվ ծառայող պատանիներից է: Նա սիրով մասնակցում է նաև պատանյաց խմբակին: Վերջերս մի նոր վկայություն լսեցինք նրանից. «Ես հաճախում էի եկեղեցի, բայց չէի կարողանում կարդալ Աստծո Խոսքը: Հորաքրոջս հետ միասին սկսեցինք աղոթել, խնդրեցինք, որ Աստված օգնի ինձ (նրա համար աղոթում էին նաև իր առաջնորդները և երիտասարդները): Աստված անպատասխան չթողեց իմ խնդրանքը: Այժմ Աստծո Խոսքն ինձ համար թանկագին գանձի նման է»:

Աստվածատուր Ղազարյան

❊ ❊ ❊

Եբրայեցիներին ուղղված նամակ (բաժին 2, մաս 1)

1. Նախաբան

Եբրայեցիների թղթի առաջին 7 գլուխների սերտողությունից հետո անցնում ենք սերտելու թղթի հաջորդ 6 գլուխները: Ինչպես տեսնելու ենք, այս գլուխները մանրամասնությամբ լույս են սփռում նամակում ավելի շուտ տեղ գտած թեմաների վրա՝ Քրիստոսի քահանայապետության գերակայությունը, Քրիստոսի զոհաբերությունը, Հին և Նոր Ուխտը և երկրավոր ու երկնային խորանները:

Հեղինակն ընդգծում է այն զարմանալի ճշմարտությունը, որ ի հակադրություն հազարավոր կենդանական զոհերի, որ դարերի ընթացքում կատարվել են, Հիսուսը մեկ անգամ պատարագվեց. «Բայց այս Մարդը, մեղքերի համար մեկ անգամ պատարագ մատուցելով, հավիտենապես նստեց Աստծո աջ կողմում» (Եբր. 10.12): Սա ցույց է տալիս, որ Նրա զոհաբերությունը մեկընդմիշտ և լիովին բավարարեց բոլոր մարդկանց անցյալի, ներկայի և ապագայի կարիքը, և որ Նա «կարո՞ղ է լիակատար փրկել բոլոր նրանց, ովքեր Իրենով են մոտենում Աստծուն, քանի որ Նա հավիտյան ապրում է՝ նրանց համար բարեխոսելու» (Եբր. 7.25):

Աստծուն մոտենալու միակ ճանապարհը հավատքն է (Եբր. 11.6): Ահա թե ինչպես էին Հին Կտակարանի բազում հավատացյալներ ապրում իրենց կյանքը Աստծո հետ: Նրանք չէին վախենում հալածանքից կամ տառապանքից, այլ իրենք իրենց աչքերը սևեռել էին նպատակին: Օրինակ՝ Աբրահամը և ուրիշները փնտրում էին երկնային երկիրը, իսկ Մովսեսը Քրիստոսի նախատինքն ավելի մեծ հարստություն համարեց, քան Եգիպտոսի գանձերը, որովհետև «վարձատրությանն էր սպասում» (Եբր. 11.16, 26):

Հաշվի առնելով Քրիստոսի հայտնության ազդեցությունն ու համոզիչ լինելը, Աստված կդատի նրանց, ովքեր կմերժեն կամ պարզապես կանտեսեն ճշմարտությունը: Այնպես որ մեր առաջ ևս երկու ծանր նախազգուշացում է դրվում՝ «դատաստանի զարհուրելի սպասումը և

կրակի բարկությունը, որ լափելու է հակառակորդներին» և «մեր Աստվածը սպառող կրակ է» (Եբր. 10.27, 12.29):

2. Քրիստոսի քահանայապետության գերակայությունն ու Նրա զոհաբերությունը (8.1 - 10.18)

Առաջիկա երեք գլուխներում հեղինակը մեկ անգամ ևս մանրամասնորեն ցույց է տալիս Քրիստոսի քահանայապետության հսկայական առավելությունը Ահարոնյան քահանայության նկատմամբ: Նա նաև ցույց է տալիս Նոր Ուխտի գերազանցությունը հնի նկատմամբ և նշում, որ Նոր Ուխտը հիմնականում Իսրայելի հետ է (Եբր. 8.8): Մենք պետք է նշենք, որ այն գործուն չի դառնա, մինչև որ ազգը ընդունի Հիսուսին՝ որպես իրենց Մեսիայի: Դա լինելու է այն ժամանակ, երբ Նա վերադառնա երկիր՝ հազարամյա թագավորության համար: Այնուամենայնիվ, քրիստոնյաներն այսօր հոգևոր իմաստով կարող են Նոր Ուխտի բազում օրհնություններ վայելել (համեմատե՛լ Ղուկ. 22.20, Եբր. 9.15, 10.10, 19-22, 12.24, Բ Կորնթ. 3.6):

Հեղինակն ասում է. «Մեր ասածների բովանդակությունն այս է. մենք ունենք այնպիսի մի Քահանայապետ, որ երկնքում Գերազանցության գահի աջ կողմում է նստած. Պաշտոնյա Սրբարանի և ճշմարիտ խորանի, որ Տե՛րը կանգնեցրեց, և ոչ թե մարդը» (Եբր. 8:1): Այնպես որ մենք կարող ենք հստակ հասկանալ, որ Հիսուսն այժմ բնակվում է Երկնքում և ծառայում է երկնային խորանին:

10-րդ սերտողությունում մենք անդրադարձանք Հին Ուխտին և խորանին, քահանայությանը և ընծաներին, ինչպես որ Մովսեսի օրերում էր կատարվում: Այստեղ հեղինակը այդ բաների մասին խոսում է առաջին (կամ հին) Ուխտի լույսի ներքո (Եբր. 8.7, 13, 9.1, 15, 18): Այս Ուխտը պայմանավորված էր Իսրայելի հնազանդությամբ և քանի որ Իսրայելը ձախողվեց հնազանդելու մեջ, Ուխտը դարձավ անարդյունավետ: Ահա թե ինչու է Աստված Երեմիա մարգարեի միջոցով ասում, որ Ինքը Նոր Ուխտ է անելու Իսրայելի և Հուդայի տան հետ: Եվ քանի որ Տեր Հիսուսը այս Նոր Ուխտի միջնորդն է, այն երբեք չի կարող ձախողել կամ հնանալ: Բացի դրանից, Աստված պատրաստվում է տեղադրել Իր օրենքները նրանց մտքերում և գրել նրանց

սրտերում: Այդ գալիք օրերում վերանորոգված Իսրայելը կատարելապես պիտի հնազանդվի Նրան (Եբր. 8.10):

Հեղինակն ամփոփում է առաջին խորանի գույքը, ինչպես որ Աստված պատվիրել էր Մովսեսին, և նշում է, թե ինչպես էին քահանաները կատարում իրենց տարբեր գործառույթները, այդ թվում՝ կենդանիների զոհաբերությունները: Եբր. 9.2-5-ում թվարկված են գույքի անունները. Սրբության մեջ՝ աշտանակը, սեղանը և առաջավորության հացը. իսկ Սրբության սրբոցում՝ ոսկե բուրվառը և ոսկեպատված Ուխտի տապանակը: Մեզ հիշեցվում է, որ տապանակի մեջ կար մանանան պարունակող ոսկե սափորը, Ահարոնի գավազանը և Ուխտի տախտակները: Տապանակը ծածկված էր «քավություն»-ով, որի վրա փառաց քերովբեներն էին (համեմատե՛լ Ելից. 37.1-29-ի հետ): Այս գույքի հոգևոր իմաստները տրված են 10-րդ սերտողության 6.1 բաժնում:

Ելից, Ղևտացիների և Հին Կտակարանի այլ գրքերից իմանում ենք, որ ոսկե բուրվառը գտնվում էր Սրբության մեջ, բայց այստեղ՝ Եբրայեցիների գրքում, այն գտնվում է Սրբության սրբոցում: Ճշմարիտ է այն, որ երբ խորանին փոխարինեց Սողոմոնի տաճարը, ոսկե զոհասեղանը դրվեց Սրբության մեջ (Գ Թագ. 6:22). Աստված ի սկզբանե կարգել էր, որ այն պետք է գտնվեր Սրբության մեջ:

Ինչո՞ւ է Եբրայեցիների հեղինակը գրում, որ ոսկե բուրվառը գտնվում է Սրբության սրբոցում: Հնարավոր է, որ պատասխանը հետևյալն է. քանի որ այն ներկայացնում է Քրիստոսի միջնորդական և զոհաբերական գործը մեր անունից, ապա ֆունկցիոնալ կերպով այն պատկանում է Սրբության սրբոցին՝ Աստծո՝ Իր ժողովրդի մեջ բնակվող վայրին: Այս կերպ հեղինակը իր ունկնդիրներին նախապատրաստում է թե ինչ է ուզում ասել. Քրիստոսն ինչ արեց, երբ մեռելներից հարություն առավ:

Առաջին Ուխտին ի հակադրություն՝ Հիսուս Քրիստոսը բոլորի համար մուտք գործեց երկնավոր Սրբության սրբոցը Իր իսկ արյունով, որպեսզի բոլոր հավատացողների համար հավիտենական փրկություն ապահովի: Հետո հեղինակը ավելացնում է՝ ասելով. «Քրիստոսը ոչ թե ճշմարիտի ընդօրինակությունը եղող ձեռագործ սրբարանը մը-

տավ, այլ՝ բուն երկինքը, որպեսզի հիմա Աստծո առջև ներկայանա մեզ համար» (Եբր. 9.24): Հին Կտակարանի զոհաբերությունները անկարող էին մաքրել երկրպագություն անողի խիղճը, սակայն Քրիստոսի արյունը ճոխությամբ «կսրբի ձեր խղճմտանքը մեռած գործերից, որպեսզի կենդանի Աստծուն պաշտեք» (Եբր. 9.14): Այդ նախկին զոհաբերությունները միայն խորհրդանշական մաքրումներ էին ապահովում, սակայն «Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի արյունը մեզ մաքրում է բոլոր մեղքերից» (Ա Հովհ. 1.7):

Հետո հեղինակը խոսում է կտակի մասին: Անձը կարող է կտակ կազմել և նշել, թե ինչպես է նա ցանկանում տնօրինել իր գույքը իր մահից հետո: Կտակը չի կարող ուժի մեջ մտնել, քանի դեռ նա ողջ է. նա պետք է նախ մահանա: Որպեսզի առաջին Ուխտը գործի դրվեր, Մովսեսը վերցրեց ցուլերի և նոխազների արյուն (մահվան խորհրդանիշ), ջուր, կարմիր բուրդ, զոպա, սրսկեց գրքի և ամբողջ ժողովրդի վրա և ասաց. «Սա այն ուխտի արյունն է, որ Աստված ձեզ պատվիրեց» (Եբր. 9.20): Նման եղանակով որպեսզի Նոր ուխտը ուժի մեջ մտներ, այն անձը, ով կազմել էր դա, նախ պետք է մահանար: Մենք կարդում ենք. «Նա… մեկ անգամ ընդմիշտ հայտնվեց՝ Իր անձի պատարագումով մեղքը ջնջելու համար:… Նա հայտնվելու է երկրորդ անգամ, առանց մեղքի, փրկության համար» (Եբր. 9.26-28): Այսպիսով, մեր Տեր Հիսուսը իսկապես մեր մեծ Քահանայապետն է, ով մեզ համար դարձավ թե՛ զոհը, թե՛ զոհը մատուցողը՝ դառնալով Նոր Ուխտի միջնորդ: Նրանք, ովքեր իսկապես հավատում են Քրիստոսին և Նրա կատարած գործին, կարող են վստահ իմանալ, որ իրենց մեղքերը ջնջված են, և որ Քրիստոսն անձամբ վերադառնալու է՝ իրենց հավիտենական փրկությունը բերելով:

(Շարունակելի)

Translated from QMBC Panorama of the Bible Course with permission. QMBC Inc.
Թարգմանված է QMBC Աստվածաշնի պանորամա դասընթացի թույլտվությամբ:
QMBC Inc.

Մի՛ վհատիր, անգամ երբ մարդիկ չեն անում, այն, ինչ պետք է անեն (Գործք 12.25, 13.13)

Ս ողջոք այսօր զայրացած ես որևէ մեկի վրա: Մինչ զայրույթիդ տեղիք տալը երկու բան նկատի առ.

- Քո մտածածը գուցե լիովին ճշմարիտ չէ:
- Քո մտածածը գուցե ճշմարիտ է, սակայն չես կարող ուրիշներին ստիպել ճիշտ որոշումներ կայացնել:

Հովհաննես Մարկոսի դեպքը

Բառնաբասը և Սողոսը, իրենց պաշտոնը կատարելով, Երուսաղեմից ետ դարձան. և իրենց հետ էր նաև Հովհաննեսը, որ Մարկոս էր կոչված (Գործք 13.4-5):

«Եվ Պողոսը ու նրա հետ եղողները Պափոսից դուրս ելան, եկան Պամփիլիայի Պերգեն, բայց Հովհաննեսը նրանցից բաժանվելով վերադարձավ Երուսաղեմ» (Գործք 13.13):

Չափազանց խրթին

Հովհաննես Մարկոսը հրաժարվեց միսիոներական ճամփորդությունից և վերադարձավ Երուսաղեմ: Դա ավելի դժվար գործ էր, քան նա ակնկալել էր: Միսիոներական աշխատանքը կարող է պահանջկոտ լինել:

Նախ՝ հիանալի խոստում, ապա՝ հիասթափություն

Պողոս առաքյալն ու Բառնաբասը, հանձին Հովհաննես Մարկոսի, տեսնում էին խոստումնալից երիտասարդի, սակայն վերջինս հրաժարվեց 1-ին իսկ միսիոներական ճամփորդության սկզբում: Նրանք երկուսն էլ հույս էին կապում Հովհաննես Մարկոսի օգնության հետ, սակայն վերջինս հիասթափեցրեց ու թևաթափ արեց նրանց՝ անհուսալի լինելով:

Ինչո՞ւ ենք դառնում անհուսալի

Մարդիկ անհուսալի են դառնում բազում պատճառներով: Որոշ

պատճառներ տրամաբանական են, որոշները՝ ոչ: Պետք է զգույշ լինենք: Նաև պետք է հիշենք, որ մեր կյանքի ընթացքում մենք ևս հիասթափեցրել ու վիատեցրել ենք որոշ մարդկանց:

Տարաձայնություն Քրիստոսով եղբայրների միջև

Ինչպես գիտենք, Պողոս առաքյալն ու Բառնաբասը գժտվեցին Հովհաննես Մարկոսին 2-րդ միսիոներական ճամփորդության համար ետ ընդունելու հարցում (Գործք 15.36-41):

Քաջալերանք

Կարող ենք քաջալերվել այն փաստից, որ նրանք հաշտվեցին, որովհետև ավելի ուշ Պողոս առաքյալը հիշատակում է Բառնաբասի (Ա Կորնթ. 9.6), նաև Հովհաննես Մարկոսի (Բ Տիմ. 4.11) հետ ունեցած լավ հարաբերությունների մասին:

Մի՛ վիատվիր, անգամ երբ մարդիկ չեն անում այն, ինչ պետք է անեն:

Դոկտ. Չեսլո Բասսարա
(czeslaw7@eta.pl, www.proword.eu)

Մի մարդ որոշեց, որ իրեն բաժին է ընկել չափազանց ծանր ճակատագիր: Եվ դիմեց առ Աստված այսպիսի խնդրանքով. «Տե՛ր իմ, անչափ ծանր է իմ խաչը և ես չեմ կարող այն կրել: Իմ ճանաչած բոլոր մարդկանց խաչերն անհամեմատ թեթև են: Հնարավոր չէ՞, որ Դու իմ խաչը փոխարինես մեկ այլ՝ ավելի թեթև խաչով»:

Եվ Աստված ասաց. «Լավ, ես քեզ հրավիրում եմ Իմ խաչերի պահեստը, ընտրիր ա՛յն, որը քեզ դուր կգա»:

Մարդը պահեստ մտավ և սկսեց խաչ ընտրել իր համար: Նա փորձեց բոլոր խաչերը և բոլորն էլ նրան չափազանց ծանր թվացին: Բոլոր խաչերը տնտղելուց հետո, նա հենց մուտքի մոտ նկատեց մի խաչ, որ նրան շատ ավելի թեթև թվաց, քան մյուսները և դիմեց Աստծուն. «Թո՛ւյլ տուր ինձ վերցնել սա»:

Եվ Աստված ասաց. «Դա քո սեփական խաչն է, որ դու թողեցիր դռների մոտ, նախքան մյուս խաչերը փորձելը»:

Հոգևոր տնտեսագիտության դասեր մանուկների և պատանիների հետ աշխատողների համար (2)

Դաս 2

«…Ես անհնազանդ չգտնվեցի այն երկնային տեսիլքին» (Գործք 26.19):

Անցած դասին դիտարկեցինք, թե ինչ է ներդրումը և ինչ ենք ներդնում: Իսկ այս դասին կդիտարկենք ՆԵՐԴՐՄԱՆ կարիքն ու արժեքը: Տեր Հիսուսն ակնկալում է, որ մեր ժամանակը, աշխատանքը, գումարն ու ինքներս մեզ ներդնենք, որ վարձք ապահովենք ապագայի համար:

Ինչո՞ւ պետք է ներդնենք: Մենք ներդնում ենք նախ, որովհետև ՏԵՍԻԼՔ ունենք: Տեսիլքն ապագային նայելու և կանխատեսումներ անելու կարողությունն է:

Դամասկոսի ճանապարհին Պողոսն այդ երկնային տեսիլքը ստացավ, այն մասին, թե Աստված նրա միջոցով ինչ էր պատրաստվում անել բազմաթիվ հեթանոսների կյանքում, ինչը նրա ծառայության հիմնասյունն էր լինելու: Այդ պատճառով էլ նա շարունակում է անդրադառնալ դրան իր գրվածքներում (Հռոմ. 11.13, Եփես. 3.1, Գործք 13.47): Տեսիլքն ու ներդրումը սերտորեն փոխկապակցված են: Մենք ներդնում ենք մեր տեսածի և ապագայում մեր հուսացածի հիման վրա:

Առաջին՝ ներդնում ենք, որովհետև շահագրգռված ենք ապագայով, և հույս ունենք՝ մի օր տեսնել մեր տեսիլքի ու ծրագրի իրականացումը:

Բիզնեսմենն իր կապիտալի մի մասը մի կողմ է դնում, որ կարողանա դա օգտագործել իր բիզնեսի հետագա զարգացման համար:

Խելամիտ ծնողն իր եկամտի մի մասը խնայողության է վերածում, որ կարողանա հոգալ երեխաների ուսման վարձերը:

Քրիստոնյա ծառայողն ապրում ու աշխատում է ներկայում, բայց, եթե իմաստուն է, ծրագրում է ապագան:

Երկրորդ՝ մենք ներդնում ենք, որովհետև ուզում ենք Տեր Հիսուսի օրինակին հետևել: Նրա երկրային ծառայությունը մոտ երեք տարի տևեց, որոնց ընթացքում հոգաց բազում ներկա կարիքներ՝ բժշկեց հիվանդների, դևեր հանեց, մեռածներին հարություն տվեց: Սակայն Նրա ծառայությունը մեծապես ուղղված էր ապագային, երբ Ինքն այլևս ֆիզիկապես ներկա չէր լինի: Ապագայի վերաբերյալ Նա հըստակ տեսիլք ուներ, ու Նրա ամեն քայլը կապված էր այդ տեսիլքի հետ:

Նա ներդնում էր Իրեն ու Իր ժամանակը ապագայի համար Իր ունեցած ծրագրի ու տեսիլքի մեջ: Հետևաբար, թեպետ երկրի վրա եղած ժամանակ Նրա աշակերտները համեմատաբար փոքրաթիվ էին, բայց նրանց թիվը զգալիորեն ու կտրուկ մեծացավ Նրա գնալուց հետո, քանի որ Նա իմաստությամբ էր ներդրել:

Երբ մտածում ես, թե ինչպես ներդնես ժամանակդ, փողդ ու աշխատանքային ծրագիրդ, հարկ է, որ մտածես ոչ միայն ներկա կարիքների, այլև ապագա հնարավորությունների և ապագայի մեջ քո ներդրման մասին:

Մանկանց ավետարանչության ընկերակցություն

- ***«Մարդիկ լինում են անհասկացող, անտրամաբան ու եսասեր, միեւնույնն է՝ ներեք նրանց»:***
- ***«Եթե հաջողության եք հասել, ապա կարող են հայտնվել բազմաթիվ կեղծ ընկերներ եւ իսկական թշնամիներ: Միեւնույնն է՝ ձգտե՛ք հաջողության»:***
- ***«Եթե բարություն եք գործել եւ մարդիկ մեղադրել են ձեզ ծածուկ եսասիրական մտադրության մեջ, միեւնույնն է՝ բարությո՛ւն գործեք»:***
- ***«Եթե ազնիվ եք ու անկեղծ, մարդիկ կխաբեն ձեզ, միեւնույնն է՝ մնացե՛ք ազնիվ եւ անկեղծ»:***

Մայր Թերեզա

Ի՞նչը մղեց Հիսուսին խաչը բարձրանալու

Ա Պետրոս 2.21-25

Տարիներ առաջ կրոնական միջհարանվանական ժողովի ընթացքում հարց ծագեց, ո՞վ խաչեց Հիսուսին: Երկար վիճաբանություններից հետո ասվեց, որ ո՛չ հրեաները, ո՛չ Պիղատոսը, ո՛չ էլ ներկա հռոմեացիներն էին, այլ այն ժամանակի հռոմեական կայսրությունն էր, որ ներկայում գոյություն չունի: Հանցանքը գոյություն չունեցող մեկի վրա դրվեց, որպեսզի ոչ ոք պատասխանատու չհամարվեր: Սակայն զարմանալին այն է, որ կրոնականներից ոչ ոք չանդրադարձավ, որ Հիսուսին խաչը հանողը, ինչպես Պողոս առաքյալն է ասում, մեր մեղքերն էին: Երբ Հիսուսը երկրի վրա էր, ասաց. «Ես իշխանություն ունեմ այն վար դնելու և իշխանություն ունեմ վերըստին այն առնելու...»: Երբ դատվում էր, Նա ասաց. «Կարծում ես, թե Ես չե՞մ կարող հիմա Իմ Հորն աղաչել, և Նա Ինձ կտա ավելի քան տասներկու գունդ հրեշտակներ»: Հիսուսը կարողություն ուներ խաչը բարձրանալու կամ չբարձրանալու, սակայն ի՞նչը ստիպեց Նրան, որ խաչվի: Աստծո Խոսքն ասում է, որ առաջին պատճառը մեր մեղքերն էին: Ադամից սկսած՝ մեղքը բաժանեց մարդուն Աստծուց, բարեկամի դեմ թշնամի դարձրեց, մեր շրթունքներից փառաբանությունը վերցրեց, մեզ անասունի աստիճանի նվաստացրեց, ընտանիքներ քայքայեց և դրանք իրարից բաժանեց: Ցավալին այն է, որ այս օրերի մեղք գործելը թաքուն բան չէ այլևս, մեղքն այլևս մեղք չի համարվում. դրան շատ թեթև են վերաբերվում, նույնիսկ հպարտանում են այն գործելով: Մի՞թե այս բոլորը չէր, որ մեր Տիրոջը խաչը հանեց: Աստծո Խոսքում կարդում ենք, որ Հիսուսն աշխարհի սկզբից առաջ արդեն Աստծո մորթված գառնուկն էր: Այնքան կորչեցինք ու թաղվեցինք մեղքի մեջ, որ Աստված Իր ամենագիտության մեջ միակ դարմանը, միակ լուծումը պատրաստեց մեզ համար:

Վերջերս հեռուստացույցով շանթահարող հայտագրի ականատես եղա. դիվային կերպարանքով անձիք հարցաքննվում էին, թե ինչու են մարդկային արյուն խմելը դարձրել իրենց պաշտամունքը: Նրանցից

մեկը պատասխանեց, թե արյունը աշխարհի վրա հիշատակված ամենահին բաներից մեկն է, թե նույնիսկ Սուրբ Գիրքն է խոսում արյան կարևորության մասին, թե առանց արյան կյանք չկա, առանց արյան Աստծուն հաճելի լինել անհնար է: Սատանապաշտներն իսկ խոսում են արյան մասին: Աստծո Խոսքն ասում է, որ առանց արյան քավություն չկա, սակայն ո՞ւմ արյունն է՝ մարդո՞ւ, նոխազների՞. ո՛չ, հապա Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի արյունը: Եթե Հիսուսն Իր արյունը չթափեր, մեր մեղքերին դարման չէր լինի, մեղքերից ազատվելու ուրիշ միջոց, ուրիշ կերպ չէր լինի: Հիսուսին խաչը հանողը ոչ միայն մեր մեղքերն էին, հապա Նրա՝ մեր հանդեպ ունեցած սերը: Աստված այնպես սիրեց մեզ, որ Իր Որդուն տվեց: Եթե մեկին սիրես, կտաս, և որքան շատ սիրես այն անձին, այնքան ավելի կտաս, և որքան էլ զոհողությունդ մեծ լինի, այն աչքիդ չի երևա:

Տարիներ առաջ Բեյրութում հանդիպեցի ամերիկացի մի զույգի: Երիտասարդը պատմեց, թե ինչ մեծ զոհողություններով էր ուզում ադամանդե մատանի գնել իր նշանածին: Այս երիտասարդը ապրում էր շատ ցուրտ ձմեռ ունեցող նահանգում և դեռ ուսանող լինելով՝ պետք է աշխատեր, որ թե՛ ընտանիքին օգտակար լիներ, թե՛ դպրոցականին հասներ: Իր նշանածին այնքան էր սիրում, որ որոշեց գնալ ամեն զոհողության իր որոշած ադամանդե մատանին գնելու համար: Երկար հաշվարկներից հետո նա հասկացավ, որ այդ գումարը գոյացնելու միակ կերպը իր երթևեկության ծախսից կտրելն էր. դա նշանակում էր ամեն օր այդ ցրտին երեք ժամ քայլել դպրոց և աշխատանքի վայր: Երբ ամիսներ հետո իրականացավ փափագը, նշանածը մեծ զարմանքով և հիացմունքով իմացավ իրականությունը: Ինչպիսի՜ սեր, ի՜նչ մեծ զոհողություն:

Տերը սրանից հազարապատիկ անգամ ավելի սիրեց մեզ և տվեց ոչ թե մի մատանու գին, այլ Իր կյանքը:

Այսօր եթե մեկը մեզ նվեր է բերում կամ ճաշի է հրավիրում, փոխադարձում ենք ազնվությամբ, որովհետև պարտական ենք զգում:

Տերը մեզ համար մահացավ, արդյոք պատրա՞ստ ենք փոխադարձելու Իր սերը: Այս օրերում մենք ստիպված չենք Տիրոջ համար մեռնել, որովհետև հալածանքի ենթակա չենք, բայց մեկ բան կա, որ

պետք է անենք՝ ապրենք Տիրոջ համար: Կարո՞ղ ենք Նրան այնքան սիրել, որ Իր համար ապրենք:

Հին Կտակարանում Աստված կամեցավ, որ մարդիկ նոխազների արյուն թափեն ոչ թե իրենց մեղքերի քավության համար, այլ հնազանդության, Իր պատվիրանները պահելու համար: Նրանց թափած արյունը Հիսուսի թափած արյան շուքն էր: Եկող Փրկչին հավատալով՝ մեղքերի քավություն եղավ:

Հաղորդության սեղանը հիշեցնում է մեզ Հիսուսի՝ խաչը բարձրանալը: Չմոռանանք, որ Քրիստոսին խաչը հանողը հրեան կամ հռոմեացին չէր, այլ դու և ես: Այս սեղանը սգո սեղան չէ, այլ ցնծության և փառաբանության, որովհետև Նա մեզ շատ սիրեց, Իր արյունը թափեց, որ մենք հավատանք և ազատվենք մեր մեղքերից:

Հովիվ՝ Հապիպ Ալաճաճի
Քաղված՝ «Հատընտիր հոգևոր պատգամներ» գրքից

Ս երի անունով մի փոքրիկ աղջիկ շատ էր սիրում Աստվածաշունչը: Աստվածաշունչ կարդալու համար նա ստիպված էր 2 մղոն քայլել մինչև իր ազգականի ագարակը: Մինչև 16 տարեկանը այս աղջիկը, իրեն տրված մանր դրամները խնայելով, Աստվածաշունչ գնելու համար անհրաժեշտ դրամ հավաքեց: Այդ ժամանակ Աստվածաշնչյան ընկերություններ չկային, և Աստվածաշունչը շատ հազվագյուտ ու թանկ էր: Դրա մեկ օրինակը 6 դոլար և 25 սենթ արժեր:

Մի օր 28 մղոն ճանապարհ քայլեց բոկոտն և միայնակ, մինչև որ հասավ այնտեղ, ուր Աստվածաշունչ էր վաճառվում: Հարցրեց և գտավ պրն Չարլզին, որ Աստվածաշնչեր հայթայթող էր: Նրա խոսքից հասկացավ, որ վերջին օրինակն արդեն իսկ վաճառված է: Աղջկա պատմությունից և արցունքներից շատ ազդված՝ նրան տվեց մի օրինակ, որը խոստացել էր բարեկամին:

Մերի Ջոնսը շատ ուրախացած տուն վերադարձավ: Այսպես այս աղջկա կյանքը 1804 թվականին Բրիտանական աստվածաշնչյան ընկերության սկզբնավորման մեծ ազդակ եղավ:

Մարիամ, որդի ունենալու խոստում
Ղուկաս 1.26-56

Զաքարիային այցելելուց վեց ամիս անց Գաբրիել հրեշտակապետը այցելեց Մարիամին: Այս անգամ ուղերձն այն էր, որ կույսը որդի է ունենալու: Այցելության ժամանակ Մարիամն արդեն նշանված էր Հովսեփի հետ և պետք է ամուսնանային:

Եթե Զաքարիան ցնցվեց հրեշտակապետի ներկայությունից, ապա Մարիամը մտահոգվեց նրա ողջույնից: Այնուամենայնիվ, նրա ողջույնը հուսադրող էր: Գաբրիելը դիմեց Մարիամին իբրև շնորհընկալի և բոլոր կանանց միջից օրհնվածի: Բացի դրանից, նա վստահեցրեց նրան, որ Տերը իր հետ է և վախենալու կարիք չկա:

Գաբրիելն ընդգծեց, որ Մարիամն Աստծո առջև շնորհք է գտել: Նրա հավատն ամուր էր, կյանքը՝ բարեպաշտ: Իսրայելի բոլոր կույսերից նա եղավ այն ընտրվածը, ով պետք է իր որովայնում կրեր Բարձրյալի Որդուն: Գաբրիելը Մարիամին ասաց, որ նա կհղիանա և որդի կծնի ու Նրա անունը Հիսուս կդնի, Նա մեծ կլինի և Բարձրյալի Որդի կկոչվի:

Որքա՞ն մեծ է Նա: Եսայի 61.1-2-ը խոսում է դրա մասին: Նա Դավթից շատ ավելի մեծ կլինի, Տեր Աստված կտա Նրան Դավթի աթոռը, Նա հավիտյան կթագավորի Հակոբի տան վրա, և Նրա թագավորությանը վերջ չի լինի: Ի հակադրություն Իսրայելի նախկին թագավորների՝ Նրա թագավորությանը երբեք վերջ չի լինի: Մեծությունը երևվում է Նրա համաշխարհային տիրակալությամբ և Իր բոլոր թշնամիներին Իր ոտքերի պատվանդանի մոտ հնազանդեցնելով:

Հրեշտակը խոսեց ծնվող երեխայի բնույթի մասին. Նա սովորական տղա չէր լինելու: Գաբրիելը խոսեց Նրա մարդեղության, աստվածության և թագավորության մասին: Մարիամից ծնվելը ցույց տվեց Իր մարդեղությունը, Նրան տրվեց մարդկային անուն՝ Հիսուս: Նրա աստվածային լինելը երևաց Նրան Բարձրյալի Որդի կոչելով: Նրա թագավորությունն ու թագավոր լինելը մատնանշվեց Դավթի սերնդից լինե-

լով և հետևաբար Իսրայելի գահի օրինական իրավահաջորդը: Ի հակադրություն նախորդ թագավորների՝ Նրա թագավորությանը վերջ չի լինի:

Առաջին հայացքից տպավորությունն այն է, որ Մարիամի արձագանքը նման էր Զաքարիայի արձագանքին: Այնուամենայնիվ, Զաքարիան նշան խնդրեց, իսկ Մարիամը հարցրեց, թե ինչպես կարող էր դա տեղի ունենալ, քանի որ կույս էր: Նա չպատժվեց իր հարցի համար, քանի որ նրա հարցը տարբերվում էր Զաքարիայի հարցից, դա անհավատությամբ ասված հարց չէր, այլ տարակուսանքով: Հենց որ բացատրությունը տրվեց, նա պատրաստակամորեն խոնարհվեց Տիրոջ առաջ՝ որպես աղախին՝ պատրաստ անելու այն ամենը, ինչ իր Տիրոջ կամքն էր: Եղիսաբեթը հետագայում օրհնեց Մարիամին՝ նրան կոչելով երանելի, որ հավատում է Տիրոջ կողմից իրեն ասվածներին: Զաքարիան պետք է հավատար, որ Աստված կարող էր կրկնել Աբրահամին արած Իր բարությունը՝ նրան որդի պարգևելով: Ճշմարիտ է, որ Եսային գրել էր, որ կույսը հղանալու է, սակայն Մարիամը չէր մտածում, որ այդ մարգարեությունը իր անձի միջոցով էր կատարվելու:

Հրեշտակապետի պատասխանը ցույց է տալիս, որ Աստված ղեկավարում է ամեն բան և ընդգծում է Տեր Հիսուսի աստվածությունը: «Սուրբ Հոգին կգա քեզ վրա»: Այս ծնունդը Աստծո միջամտությամբ էր լինելու: Քանի որ մարդկային գործոն չկար. երեխան առանց մեղքի էր ծնվելու: Բացի դրանից, Նա Աստծո Որդի պիտի կոչվեր: Մանուկը Աստված էր, սուրբ Աստված:

Այստեղ տեսնում ենք Երրորդությունը, որը միասին համագործակցում է: Հրեշտակը խոսեց Սուրբ Հոգու, Բարձրյալի զորության և այն Սուրբի մասին, ով ծնվելու էր: Երրորդության բոլոր երեք անձինք ակտիվորեն ներգրավված են ընկած մարդկությունը փրկագնելու առաքելության մեջ: Նա, ով պիտի ծնվեր, և՛ կատարյալ Աստված, և՛ կատարյալ մարդ էր: Շատ կարևոր էր, որ Մեսիան առանց մեղքի լիներ (աստվածությունը) և միևնույն ժամանակ կարողանար մահանալ ուրիշների մեղքերի համար (մարդեղությունը):

Մարիամի արձագանքը ցույց էր տալիս իր՝ Տիրոջ ծառան լինելու

պատրաստակամությունը: Նա գիտակցում էր իր որոշման պոտենցիալ վտանգն ու ամոթանքը: Հրեշտակը Մարիամից հեռացավ՝ նրան կարևոր պատգամ թողնելով. «Աստծո համար անկարելի բան չկա»: Այն Մեկը, ով կարելի է դարձնում, որ մի ամուլ պառավ զավակ ունենա, կարող է նաև կույսին զավակ տալ առանց որևէ մարդկային միջամտության:

Մեզ համար այսօր

Ծնված երեխայի բնությունը մեր փրկության առանցքային գործոնն է: Տեր Հիսուսը կատարյալ Աստված է և կատարյալ մարդ: Եթե այլ կերպ լիներ, ապա մեր փրկությունը վտանգված կլիներ: Միայն Աստված, ով կատարյալ է, առանց մեղքի, և միայն մարդը կարող էր մահանալ՝ ուրիշի մեղքերն իր վրա վերցնելով: Առանց սրա մենք հույս չէինք ունենա: Մենք փառք ենք տալիս Աստծուն Նրա Որդու կատարելության համար՝ իմանալով, որ դա անհրաժեշտություն էր, որպեսզի մեր փրկագնումը իրականացվեր:

Մարիամի հավատքն ու Տիրոջ աղախինը լինելու պատրաստակամությունը մեզ համար հիանալի օրինակ է: Արդյոք պատրա՞ստ ենք Քրիստոսի անվան համար դիմանալու հնարավոր նախատինքներին և անհասկացողություններին:

Նրանք, ովքեր պատրաստ են հավատալու, Տերը նրանց զորություն է տալիս, որպեսզի իրենց հավատքը էլ ավելի զորանա: Մարիամին պատմվեց իր ազգական Եղիսաբեթի մասին, ում կյանքում Աստված «անհնարին» մի բան արեց: Ուրիշների փորձառությունից սովորելը քաջալերում է մեզ հավատքի մեջ կանգուն մնալու:

«Եվ հայտնապես մեծ է աստվածապաշտության խորհուրդը. Աստված հայտնվեց մարմնով, արդարացավ Հոգով, երևաց հրեշտակներին, քարոզվեց հեթանոսների մեջ, աշխարհում հավատացվեց ու վեր՝ փառքի մեջ ընդունվեց» (Ա Տիմ. 3.16):

Դոն Սթորմը

* * *

Քեզ ի՞նչ օգուտ

1. Քեզ ի՞նչ օգուտ, որ դու գիտես,
Թե ատոմը ինչպես ճեղքես,
Իսկ հարազատ եղբորդ հետ,
Խոսք չես կիսում վաղուց և հետ:

2. Քեզ ի՞նչ օգուտ, որ դու գիտես,
Թե աստղերը ինչով դիտես,
Բայց կարիքը քո հորն ու մոր,
Չես նկատում ոչ հին, ոչ նոր:

3. Քեզ ի՞նչ օգուտ, որ դու գիտես,
Հարստություն ինչպես կիտես,
Իսկ գանձերից, սուրբ, հոգևոր,
Միշտ մնում ես մերկ ու տկլոր:

4. Քեզ ի՞նչ օգուտ, որ դու գիտես,
Ինչպես ծովի հատակն իջնես,
Բայց երբ փորձության հանդիպես,
Փոքրիկ առվում կխորտակվես:

5. Քեզ ի՞նչ օգուտ, որ դու գիտես,
Աշխարհն ինչպես կառավարես,
Բայց համաձայն Սուրբ Գրքերի,
Դու գերին ես քո կրքերի:

6. Քեզ ի՞նչ օգուտ, որ դու գիտես,
Տիեզերքը ոնց նվաճես,
Բայց քո տանը, ընտանիքում,
Որպես լուրջ մարդ չես ընդունվում:

7. Քեզ ի՞նչ օգուտ, որ դու գիտես,
Ավետարանն ամենատես.

Ավա՜ղ Նրա մի բառն անգամ,
Չես համարում դու քեզ պատգամ:

8. Քեզ ի՞նչ օգուտ, որ դու գիտես,
Թե որպես ազգ՝ դու շատ հին ես,
Երբ քո վարք ու բարքով հիմա,
Բիրտ ցեղերից վայրենի ես:

9. Քեզ ի՞նչ օգուտ, որ դու գիտես,
Թեքված ժայռը ինչպես շիտկես,
Իսկ քո ճամփեն, անլույս, անշողք,
Տանում է քեզ ուղիղ դժոխք:

10. Քեզ ի՞նչ օգուտ, որ դու գիտես,
Քամին ո՞նց է փչում, ինչպես,
Բայց քո սրտում մեծ փոթորիկ,
Ցմեռ է ու սառնամանիք:

11. Քեզ ի՞նչ օգուտ, որ դու գիտես,
Լավ կատակել, սրամիտ ես,
Բայց չես կարող ուրախանալ,
Քանզի վախկոտ ու երկմիտ ես:

12. Եվ այսպես դու գիտնական ես,
Շատ տեղերում պատվական ես,
Բայց, որ անցնի սրտիդ ահը:
Տիրոջը տուր կյանքիդ գահը:

Գառնիկ Աբրեյան
Քաղված՝ «Պոեմս Դու ես Հիսուս» գրքից